



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ
STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7, Հեռ.՝ 59 44 01, 59 46 01

3,7 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 59 44 01, 59 46 01

№ 2/145-Վ

«12» Մայիս 2016թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

Ս.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 2-ի թիվ 10/2016 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության հարկային հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Սամվել Մնացականյանին հայտարարել „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ,,:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության անձնակազմի հաշվառման բաժնի պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ